

4.

Երկար չսպասեց էնտուզիաստը: Ահա նորից դուրս եկաւ աղջիկը եւ սկսեց սլա-տըշգամբն աւելել: Աւելելիս, կռացած գիր-քով, նա անսաւ էնտուզիաստին եւ հետա-քրքրիւր նայեց:

Հասել էր վայրկեանը էնտուզիաստի համար: Նա հիացմունքով նայեց աղջկայ աչքերին եւ շնչաց.

— Ո՞վ ես դուն...

— Ե՛ս, Ամալիա Յարութիւնեան, կամ սոմուխտիկա: Ի՞նչ ես ուզում, ընկեր...

էնտուզիաստի աչքերը միջնեցին: Մի վայրկեանում չքացաւ նրա երազը:

— Ես այստեղ կորցրի իմ կարիքներն... մրմնջաց նա:

— Կարիքէ՞, — հարցրեց աղջիկը վերե-

ւեց. — այստեղով, որքան որ գիտեմ, մարդ չի անցել: Ի՞նչ տեսակ կին էր, ուղառա՛ւ, թէ ջահիւ...

Ապա մի րոպէ մտածելուց յետոյ, բա-ցադանչեց.

— Սպասիր ամուսնուս հարցնեմ... Նա երկար ժամանակ պատշգամբում նստած էր. գուցէ տեսած լինի...

Ապա բռնեց —

— Վահան.

Ու մի քիչ սպասելուց յետոյ, տեսնե-լով, որ ամուսինը դուրս չեկաւ, նա ինքը գնաց ներս, նրան հարցնելու: Եւ երբ նո-րից դուրս եկաւ, բերելով բացասական պատասխան, ներքեւում, փողոցում, ոչ ոք չկար:

էնտուզիաստը արդէն անհետացել էր...

Երեւան

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԷՆ

❖

Ձեզունեն կախ՝ հին մասունի մը գեղջուկ,
Շասունց շիջած՝ սիրքս ջան մ'ե արծաթէ,
Զոր մեհամայ սարդ մ'ոսայցնով կը պատէ
Դիտելով ծուռ՝ պստին փակած Սուրբ մ'անուր:

Կրտսեր մ'արեւ ու, մերթ ընդ մերթ, շունչ մը հով
Կը փայփայեն մեհուրիւնն իր քախմաւէս,
Ձեզաւ սակայն բարի ձեռք մը որ դողով
Բերեւ անոր քիչ մը կըրակ, քիչ մը ձեռք...

Դամասկոս

ԴՈՒՍԱՆ